

ԵՊԻՍԿՍՊՈՍՍ. ԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՒՆ

Ս. Ուխտիս Միաբաններէն, *Նոգ. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեան, Միաբանական Ընդհ. Ժողովոյ որոշմամբ արժանացաւ եպիսկոպոսական բարձր կարգին, շնորհարար-խուժեամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի:

Հայր Ասողիկ կուսակրօն քահանայական կարգն ընդունած էր 1932ին եւ անկէ վերջ թէ Ս. Աթոռոյ մէջ եւ թէ արտասահման իր ծառայութեան ընթացքին յայտնաբերած էր նուիրումի անկեղծ ոգի: Վեհափառ Հայրապետը զինք նշանակած էր Հայրապետական Պատուիրակ Հեռաւոր Արեւելքի:

Եպիսկոպոսական ծեռնադրութիւնը կատարուեցաւ Նոյնմ. 24ի Կիրակին: Հայր Ասողիկի հետ նոյն բարձր կարգին արժանացած են նաեւ Նոգ. Տ. Բարզէն Վրդ. Վարժապետեան, որ վերջերս ընտրուած էր Առաջնորդ Հայոց Գալիֆորնիոյ թեմին: Ինչպէս նաեւ Ս. Էջմիածնի Միաբաններէն եւ Թիֆլիզի Առաջնորդ Տ. Կոմիտաս Վրդ. Տ. Ստեփանեան, Վեհին հաճութեամբ եւ Թիֆլիզի Եկեղեցական Մարմիններու խնդրանօր: Վերջին երկուքն ալ իրենց կրօնական ուսմունքը առած էին Երուսաղէմի Ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի մէջ:

Գեր. Տ. Ասողիկ Եպս. Դեկտ. 5ին մեկնած է Կեդրոնական Ասիոյ վրայով՝ Հինդկաստան, Կալիֆոնիա, որ ասկէ վերջ իր իրաւասութեան սահմանին մէջ պիտի իյնայ, եւ ապա մի առ մի պիտի այցելէ իր ճամբուն վրայ, Սինկարուր եւ Ծակարդա, հուսկ ապա հասնելու համար իր տեղը Սիւնի, Աւստրալիա:

ՍԻՈՆ, յանուն Պատրիարք Հօր եւ Միաբանութեան, կը շնորհաւորէ Եկեղեցւոյ նոր հոգեւոր իշխանները եւ կը մաղթէ իրենց առաջնորդական ծաղկեալ գործունէութիւն իրենց պատկան վայրերուն մէջ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳԻՐ ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԿԻՐԵՂ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇԻՐՄԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

6 նոյեմբեր, 1957 թ., Թեհրան

Ամենապատիւ Տ. Տիրան Արքեպսկ. Ներսիսեան
Պատրիարք Ս. Երուսաղեմայ Հայոց
Ամենապատիւ Ս. Հայր.

Խօսին յազմունքով եւ արցունքոտ աչքերով կարդացինք Սիւնի Ցուլիս-Օգոսոս 1957 թ. համարում յոյս ընծայուած Ս. Աթոռոյ երանաւեհոն Պատրիարք Տ. Կիրեղ Խաչայեանի — տղերս ստորագրոյ կրսեւ եղբոր՝ շիրիմաբարին բացման արարողութեան մասին:

Հեռաւոր այս վայրէն, բոլոր տեղի, սոյն համեմատ տղերով, իմ ու մեր գերդաստանի կողմից, մեր անհուն երախտագիտութեան յայտնել նախ՝ Ձերդ Ամենապատեալութեան եւ Ս. Յակոբի Միաբանութեան, Ձեր աշխատանքային ուսուցչութեան համար, ապա՝ տղերս բոլոր այն յարգարժան կազմակերպութիւններին եւ ազգայնաց, որոնք մանկայն յոժարակամութեամբ ընծայութեան իրենց լաւագոյնը, հանդիսաւոր այդ օրուան՝ ծաղկազարդելով իմ յուրեմ անմուտք եղբոր դամբարանը:

Անեղծական եւ յասուկ երախտագիտութեան խօսք ունինք յայտնելու նաեւ ազնուագործ Տիրան Պ. Հինդկեանին, իր յուրեմ յիշատակելի նուիրագործման համար, որ Ասուածալայել մեծահոգութեամբ՝ հոգացել է շիրիմաբարին ամբողջ ծախսը: «Թո՛ղ երկնքի արխայութեան երանութիւնը շնորհիւ Հինդկեան գերդաստանի համայն ցնեցեցեց»:

Ի վերջոյ եւ ի խօսքոյ արեւ, մաղրում ենք Ասուածային օրհնութիւն եւ արեւուտալիք Ձերդ Ամենապատեալութեան եւ Ս. Յակոբի Միաբանութեան, ինչպէս նաեւ յարգելի Տիրան Պ. Հինդկեանին եւ համայն Երուսաղեմայ ազգայնաց:

Խոնարհարար
Մեծամ Ձերդ Ամենապատեալութեան
ԳԺՏՈՒՇԻ ՕՉԱՆԵԱՆ (ԻՍՐԱՅԷԼԵԱՆ)